ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ պարտատոմսերի 16-րդ թողարկում

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի 16-րդ թողարկման հիմնական պայմանները.	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10 000 ՀՀ դոլար
Պարտատոմսերի քանակը	100 000 հատ
Թողարկման ընդհանուր ծավալ	1 000 000 000 ՀՀ դրամ
Արժեկտրոնային տոկոսադրույք	Տարեկան 9.5%, որը կհաշվարկվի տեղաբաշխման առաջին օրվանից սկսած
Արժեկտրոնների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	24 ամիս
Տեղաբաշխման ժամկետ	04/12/2017թ.-23/02/2018թ.
Տեղեկացնում ենք, որ պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 25/07/2017թ.:	
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռք բերել 04/12/2017թ.-ից մինչև 23/02/2018թ.-ը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Գլխավոր գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ ցուցակումից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում, մասնավորապես՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի առևտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է անձնական հաշիվներ բացել «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ –ի կողմից հաշվի օպերատորի կարգավիճակ ստացած ընկերություններում և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ–ում կամ ՀՀ տարածքում գործող ցանկացած բանկում: Կատարելով ներդրում կորպորատիվ պարտատոմսերում՝ Դուք կարող եք շրջանառության ընթացքում ցանկացած պահի դրանք վաճառելիս ետ ստանալ ոչ միայն ներդրված գումարը, այլ նաև կուտակված տոկոսները:	
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերում ներդրված միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:	
Պարտատոմսերի մարման ամսաթիվ՝ 04.12.2019թ.	

Ծանուցում.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 16-րդ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով	
Արժեկտրոնային եկամուտների 1-ին վճարում	04.03.2018թ.
Արժեկտրոնային եկամուտների 2-րդ վճարում	04.06.2018թ.
Արժեկտրոնային եկամուտների 3-րդ վճարում	04.09.2018թ.
Արժեկտրոնային եկամուտների 4-րդ վճարում	04.12.2018թ.
Արժեկտրոնային եկամուտների 5-րդ վճարում	04.03.2019թ.
Արժեկտրոնային եկամուտների 6-րդ վճարում	04.06.2019թ.
Արժեկտրոնային եկամուտների 7-րդ վճարում	04.09.2019թ.
Արժեկտրոնային եկամուտների 8-րդ վճարում և պարտատոմսերի մարում	04.12.2019թ.
Այն դեպքում, երբ արժեկտրոնային եկամուտների վճարման կամ պարտատոմսերի մարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, վճարումը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը:	
Արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման գումարի փոխանցումը կատարվելու է ՀԿԴ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին՝ պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման օրվա մինչև ժամը 14:00-ն: Արժեկտրոնային եկամուտը, ինչպես նաև մարման գումարը վճարվում են վճարման օրվանը նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում, պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում կամ այլ բանկերում պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:	
Պարտատոմսերի և Բանկի մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված Պարտատոմսերի թողարկման ծրագրային **ազդագրում,** ծրագրային ազդագրի լրացումներում և թողարկման վերջնական պայմաններում:	